ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 22-ը հունվարի 2020թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, Հ. Մելիքյան(ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պետի ՊԺԿ, գնդապետ Զ. Մելիքյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ Ա. Ասատրյան,
Բացակայում է՝ ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Է. Սարգսյանը
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/8» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Գ.Տերյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/8» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Մասիսի Գարուն կ/ֆ» ՍՊԸ, որտեղ ներկայացված հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը թերի են՝ հրավերով նախատեսված նմանատիպ պայմանագրերը առկա են, սակայն բացակայում են այդ պայմանագրերի (համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերը (հանձման-ընդունման արձանագրությունները), կամ հանձման-ընդունման արձանագրությունները ներկայացված են ոչ ամբողջությամբ: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 22.01.2020թ. ծանուցել մասնակցին ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 31.01.2020թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/8» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/8» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/8» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Զ. Մելիքյան

Գնահատող Ա. Ասատրյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան